

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԻ ԱՌԹԻՒՄ

Պատմական հանգամանքների շնորհիւ հայ ժողովուրդը դարերից ի վեր բաժանուած է կրօնական մի քանի ուղղութիւնների, որոնք անցեալում դաւանական խտրութիւնների պատճառով երբեմն հակամարտութեան մէջ ընկնելով մեծապէս մնասել են ազգային բովանդակ կեանքի խաղաղ յառաջադիմութեան, աւետարանական սիրոյ փոխարէն ուսուատելութիւն տաճել միմեանց նկատմամբ և օտար միջամտութիւնների իսկ առիթ եղել՝ նախատինք բերելով մեր ազգային արժանապատուութեան:

Արեւելեան ազգերին առանձնայատուկ այս կրօնական նեղօրտութիւնն ու անհամբերատարութիւնը բարեբաղդաբար վաղուց անցել են պատմական տխուր յիշողութիւնների շարքը, և եւրոպական լոյսն ու գիտութիւնն այսօր չէ, որ զգաստութիւն են մտցրել մեր ժողովրդի մէջ՝ կրօնական համոզմունքները մարդու խղճի սրբութիւն սրբոցը համարելու, յարգանքով վերաբերելու և համբերատար ոգով ձեռքի ձեռքի տուած ու միացեալ ոյժերով համազգային ցաւերին դեղ ու դարման որոնելու:

Մենք տեսնում ենք, թէ ինչպէս հայ ժողովրդի այլ և այլ հատուածների լաւագոյն ներկայացուցիչներն այսօր միահամուռ ջանքերով աշխատում են ծաղկեցնելու մայրենի լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը, նախնեաց յիշատակները վառ պահելու հայի ազգային ինքնագիտակցութեան մէջ, ներքին կեանքը բարելաւելու և արտաքին ոտնձգութիւններին դիմադրելու: Ըստ արժանւոյն գնահատում ենք այն աննկուն ճիգերն ու անվեհեր կռիւր, որով մեր կաթոլիկ եղբայրներն ամենայն հաւատարմութեամբ ոգի ի բռին պահում—պաշտպանում են հայրենի լեզուն

և ծէսն ու իրաւունքները՝ ընդդէմ իրենց դաւանակից
 ոմանց սնափառութեան և անդրարքայական ջանքերի:
 Յայտնի են և դոհունակութեամբ ու երախտագիտութեամբ
 յիշատակելի սիրոյ այն մեծամեծ գործերը, որոնք վերջին
 տասնեակ տարիների ընթացքում կատարւում են եւրո-
 պական մարդասէր անձանց և միութիւնների ձեռքով՝ շնոր-
 հիւ հայ-աւետարանականների, յատկապէս Թիւրքիոյ հայ-
 յութեան մէջ՝ սփոփելու և ամփոփելու բռնակալների ճի-
 րաններում յօշոտուող թշուառ եղբայրներին:

Մենք լաւատեղեակ չենք և գուցէ վաղաժամ իսկ է
 արձանագրել աստէն այն ջանքերը, որոնք գործ են դնում
 մեր կաթողիկ և աւետարանական եղբայրները՝ եւրոպական
 դիւանագիտութեան միջոցով բարւոքելու Թիւրքիոյ հայու-
 թեան վիճակը: Բայց որ ընդհանուր խնդիրներում միա-
 նալու, դաւանական վէճերը մոռացութեան տալու և ազ-
 գային աւանդները սրբութեամբ պաշտպանելու գիտակցու-
 թիւնը վառ է և աւելի ու աւելի է զօրանում հայութեան
 այլ և այլ կրօնական հատուածների մէջ, դրա համար դեռ
 վերջին օրերս լաւագոյն ապացոյցները տուին մեր կաթողիկ
 և աւետարանական եղբայրները՝ առաջիններն իրենց նշա-
 նակալից դիմադրութեամբ մի շարաքաստիկ խնդրում և վեր-
 ջիններն իրենց ջերմ համակրութեամբ դէպի մեր Հայրա-
 պետի անդրանիկ կոնդակը: «Աւետաբեր» շաբաթաթերթը
 երկու համարի մէջ ամբողջովին տպագրելուց յետոյ նորին
 Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Արքայանազոյն կաթո-
 ղիկոսի անդրանիկ կոնդակը, մի երրորդ համարում այդ
 առթիւ հետևեալ խորհրդածութիւնն է անում.

Չբաւեր լսի կարդալ կամ լսել այս կոնդակին նման գրութիւն
 մը և ապա դէպքերու հոսանքէն մզուելով թոյլ տալ որ ելլէ մեր
 միտքերէն: Երբ կը նկատէ մէկը բարձր աղբիւրը որմէ կու գայ այն,
 կենսական կարևորութիւնը նիւթին զոր կը շօշափէ և ոգին ու լե-
 զուն որով խմբադրուած է, չկրնար շուտաւ թէ պիտի յաջողի խորին
 տպաւորութիւն գործել Եկեղեցիին ու Ազգին կեանքին վրայ:

Աւշադիր ընթերցողին ուշադրութիւնը գրաւող առաջին բանն
 է Քրիստոնէական ջերմ ոգին որ ամբողջ կոնդակին մէջ կը շնչէ:
 Չկայ հոս հոգեօր բռնապետ մը եկեղեցիին վրայ տիրող, այլ այն-

պիտի մէկը, որ գրաւելով հանդերձ ազգին մէջ ամէնէն բարձր ու ամէնէն պատուաւոր դիրքը, դիրք մը՝ Լուսաւորչի օրերէն մինչև այսօր մեծ ու սուրբ մարդոց յիշատակով սրբուած, կ'զգայ մանաւանդ այդ պաշտօնին յատուկ ծանր պատասխանատուութիւնները և ամենայն խոնարհութեամբ կը խնդրէ ժողովրդին ազօթքները, որպէս զի Տէր Յիսուս Քրիստոսով կարող բլլայ հաւատարմօրէն կատարել հովուական իր պարտականութիւնները: Ընթերցողը կ'զգայ նաև թէ բովանդակ կոնդակին մէջ ջերմ հայրենասիրութիւն կը բարախէ, և խորին սէր մը և կեղեցւոյ և ազգին մէն մի դասակարգին համար: Ո՛րքան պատշաճ են հայրական բոլոր խրատներն ու յորդորները՝ Պատրիարքներուն, արքեպիսկոպոսներուն, եպիսկոպոսներուն, քահանաներուն, հրապարակախօսներուն և մասնագիրներուն, հարուստներուն, ուսուցիչներուն, բարեսիրական հաստատութիւններուն, երկրագործներուն, կիներուն և տղջիկներուն (կարելի էր նաև յիշել զինուորները), ամէնուն կը տրուի խրատ մը որ ամենայնիւ արժանի է խորին մտածութեան ազօթքով հանդերձ և որ անշուշտ մեծապէս օգտակար պիտի բլլայ, երբ ի գործ դրուի հաւատարմօրէն:

Ճիշտ այս կէտն է զոր կ'ուզենք շեշտել: Ինչպէս սովորական քարոզներու համար, նոյնպէս Վեհ. կաթողիկոսին այս կոնդակին նման մեծ պատգամներու համար, մեքենայ մը չկայ որ զանոնք կենդանի արարքներու և նկարագրի փոխարկէ: Տուգանքով և բանտարկութեամբ պարտադրելի օրէնքներ չեն անոնք: Սիրտերու և խիղճերու ուղղուած կոչեր են միայն: Ուստի և կը պատահի յաճախ որ քարոզիչներն այսօր բախտակից կ'ըլլան վաղեմի Եզեկիէլ մարգարէին, որու համար գրուած է. «Սհա դուն անոնց (ժողովրդիդ) քաղցրածայն ու հմուտ նուագածուի մը ախորժելի երգին պէս ևս, որոնք քու խօսքերդ կը լսեն, բայց զանոնք ի գործ չեն դներ» (Եզեկ. ԼԳ. 32): Հետևապէս ամէնուն յայտնի են լուրջ նկատառման և արագ հնազանդութեան անհրաժեշտ հարկն ու օգուտները: Կոնդակին մէջ թուարկուած ամէն դասակարգի անդամներ պարտին անձամբ կիրարկել զայն, որպէս զի բաղձացեալ օգուտն յառաջ գայ:

Գալով անոր լեզուին, օտարականի մը որու մայրենի լեզուն Հայերէն չէ՝ պիտի ներուի իր զմայլումն յայտնել անոր բառերուն սքանչելի յորդիմաստութեան վրայ, նաև կատարեալ իր յուսահատութիւնը որու մատնուեցաւ՝ երբ փորձեց իմաստի նոյն յորդութիւնը և արտայայտութեան նոյն գեղեցկութիւնը դնել Անզգիերէն թարգմանութեան մը մէջ:

Եթէ հարցուի թէ այս կոնդակն ինչ վերաբերութիւն ունի Աւետ. և կեղեցիներու հետ, կը պատասխանենք թէ, թէև իրենք անոր մէջ ուղղակի և պաշտօնապէս ակնարկուած չեն թուիր, կրնան,

քանի որ բոլոր Հայերուն ուղղուած է, շատ պատշաճօրէն յարգել
 գայն ակնածանօք և, որչափ հնար է, օգտուիլ Հայ Եկեղեցւոյ մարդ-
 կային պետին հայրական յորդորներէն, խրատներէն և աղօթքնե-
 րէն: Հիմա կը հասկցուի առ հասարակ թէ Հայ մը Աւետ. եկեղեցիի
 մը անդամակցելով չկրնար կամ չուզեր իր ազգայնութիւնը փոխել:
 Ան կ'ստիպուի այդ քայլն առնել մի միայն իր խղճամիտ համո-
 զումներուն համար, և իր սրտին խորերը վառող միակ մեծ ու հրա-
 բորբ իղձն է իր ազգին հոգևոր յուսաւորումն ու փրկութիւնը: Կը
 յուսայ և կը հաւատայ թէ օր մը այլևս տեղի պիտի չմնայ այն բա-
 ժամնան զոր կը կրէ հիմա և որ դուրի չէ ցաւադին հանգամանքէ:
 Միևնոյն ժամանակ կը սիրէ հին մայրենի եկեղեցին և կը յարգէ ա-
 մէն ինչ որ լաւ է անոր մէջ ու բոլոր մեծ մարդիկը զորս արտադրած
 է այն Այս պարագաներուն տակ Հայ Աւետարանականներու ընդ-
 հանուր զգացումը կը ներկայացնենք, կը կարծենք, երբ ըսենք
 թէ անոնք իբրև օտարներ կամ օտարականներ չեն կարգար վեհ.
 Կաթողիկոսին կոնդակը, այլ իբրև անդամներ ազգային ընտանիքին,
 խորապէս հետաքրքրուելով ամեն բանի որ կը ծառայէ կեանքը ազ-
 նուացնել ու հոգևորել և աւելի լիովին Քրիստոսի տեւական սոզ-
 դեցութեան ենթարկել Հայ Եկեղեցին ու ժողովուրդը:

**Ի բոլոր սրտէ ողջունում ենք այս սիրալիր վերա-
 բերմունքը:**

